«ԱՌՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ARMENIAN RELIEF CORPS

Հեռ. 093 41 77 12

ՀՎՀՀ՝ 00218098

Գ-16/04

19 ապրիլի 2021 թ.

Գյումրի համայնքի ղեկավար

պրն ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բալասանյան.

«ԱՌՔ» բարեգործական հիմնադրամը Գյումրի համայնքի բնակարանի կարիք ունեցող ընտանիքների համար նախաձեռնում բնակարանների կառուցման բարեգործական ծրագիր: Ծրագրի առաջին փուլում նախատեսվում է կառուցել 8 բնակարան:

Բնակարանների արժեքի 50 տոկոսը ընտանիքների համար անհատույց նվիրատվություն է լինելու: Մնացած փոխհատուցվող մասը ընտանիքները վերադարձնելու են անտոկոս փոխառության կարգով, բնակարամուտից հետո, 10-15 տարվա ընթացքում: Վերադարձվող գումարները որպես շրջանառու միջոց օգտագործվելու են ծրագրի հետագա փուլերում:

Կառուցապատման համար, մասնավորապես, համայնքապետարանի հետ քննարկվել է Գյումրի համայնքի Մ. Խորենացու փող. 46/6 հասցեում գտնվող Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հիմնասալիկն ու նրա զբաղեցրած հողամասը::

Խնդրում եմ հատկացնել նշված տարածքը՝ բնակելի կառուցապատման համար, համաձայն Գյումրի համայնքապետարանի ճարտարապետական և քաղաքաշինական բաժնի կողմից մշակված կառուցապատման սխեմայի:

Խնդրում եմ տարածքը հատկացնել անհատույց, հինգ տարի օգտագործման իրավունքով:

Հարգանքներով

Հրահատ Ստեփանյան

Տնօրեն

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԵԼ Է 14 05 2021 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ է N 8480

Կից ներկայացնում եմ «ԱՌՔ» բարեգործական հիմնադրամի պետական գրանցման վկայականը և կանոնադրությունը:

Կազմված է 7 փետրվարի 2020 թ.
Բաղկացած է 11 էջից

Տպվագրված է ընդամենը 2 օրինակից
Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՌՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
Հիմնադիր Հերաչ Հակուլյանի
07 փետրվարի 2020 թ.-ի որոշմամբ

Տնօրենի ժ/պ՝
Հրահատ Ստեփանյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
25.02.2020թ.

գրանցման թիվ 222.160.1117966

հարկ վճարողի հաշվառման համար 00218098

Պետական ռեգիստրի աշխատակից

«ԱՌՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԵՐԵՎԱՆ 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2020-02-25

«ԱՌՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀՄԴ)

Գրանցման համար	222.160.1117966
Հիմնադրման տարի	2020
Գրանցման ամսաթիվ	2020-02-25
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	52053885
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	00218098
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	167966
Էլ. փոստ	hrahatstepanian@gmail.com
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ / 58-Ա / ԲՆ.2 ԱՐԱԲԿԻՐ 0051 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	-

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Անուն Ազգանուն	ՀՐԱՀԱՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ ՀՐԱՉԻ
Անձնագրային տվյալներ	AM0715036 2012-05-04 004
Հասցե	ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. / Շ / 58Ա / ԲՆ.2 ԱՐԱԲԿԻՐ 0051 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «ԱՌՔ» բարեգործական հիմնադրամը (այսուհետ Հիմնադրամ) իր Հիմնադիրի (այսուհետ Հիմնադիր) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված ու անդամություն չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություն է:

1.2 Հիմնադրամը ստեղծվել է Հիմնադիրի 2020թ. փետրվարի 7-ի որոշմամբ և գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք), Հիմնադրամների մասին ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք), այլ իրավական ակտերի և սույն Կանոնադրության համապատասխան:

1.3 Հիմնադրամի Հիմնադիր է հանդիսանում ՀՀ քաղաքացի Հերաչ Հակուպյանը (ՀՀ, Երևան, Մամիկոնյանց 58-Ա, բն. 2, անձնագիր՝ AT0237602, տրված՝ 30.07.2019 թվականին, 001-ի կողմից, ՀԾՀ՝ 3109520338)

1.4 Հիմնադրամի անվանումն է՝

հայերեն լեզվով՝

«ԱՌՔ» բարեգործական հիմնադրամ

անգլերեն լեզվով՝

"ARC" Charitable Foundation

1.5 Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Մամիկոնյանց 58-Ա, բն 2:

1.6 Հիմնադրամն ունի իր անվանումը ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն լեզվով պարունակող կլոր կնիք: Հիմնադրամի կնիքը կարող է պարունակել նաև Հիմնադրամի խորհրդանիշը:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

2.1 Հիմնադրամը ստեղծված է համարվում և իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում Հայաստանի Հանրապետության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից գրանցման պահից:

2.2 Հիմնադրամի իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրառման) պահից:

2.3 Հիմնադրամը իրավաբանական անձ է և ունի իր հիմնադիրի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում:

2.4 Հիմնադրամն իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

2.5 Հիմնադիրը պատասխանատու չէ Հիմնադրամի պարտավորությունների համար, ինչպես նաև Հիմնադրամը պատասխանատու չէ իր Հիմնադիրի պարտավորությունների համար: Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

2.6 Հիմնադրամը պարտավոր է ամեն տարի, մինչև հուլիսի 1-ը, իր գործունեության մասին հաշվետվությունը հրապարակել http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

2.7 Հիմնադրամն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ ՀՀ դրամով և արտարժույթով:

2.8 Հիմնադրամի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

2.9 Հիմնադրամը կարող է իրականացնել օրենքով և այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած գործունեություն:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Հիմնադրամի հիմնական նպատակներն են՝

3.1.1 Հասարակության անապահով խավին սոցիալական աջակցության ցուցաբերելը, նրանց կենցաղային և տնտեսական պայմանները բարելավելը,

3.1.2 Անտոկոս փոխառություն տալու միջոցով աջակցել սոցիալապես անապահով ընտանիքներին վերանորոգել կամ բարեկարգել իրենց բնակարանը կամ տունը,

3.1.3 Անտոկոս փոխառություն տալու միջոցով աջակցել սոցիալապես անապահով տնազուրկ ընտանիքներին կառուցելու սեփական բնակարաններ և կացարաններ,

3.1.4 Կարիքավոր անձանց և ընտանիքների հետ համագործակցելով նպաստել նրանց պարզ, հարմարավետ և մատչելի տներ կառուցելուն և վերանորոգելուն,

3.1.5 Սոցիալապես անապահով խավի, երեխաների և հաշմանդամների հանգիստը, ուսուցումը և բուժումը կազմակերպելը,

3.1.6 Սոցիալապես անապահով խավին նյութական օգնություն ցուցաբերելը,

3.1.7 Նոր աշխատատեղեր ստեղծելու և բնակչության անապահով խավին այդ աշխատանքներում ընդգրկելու համար տնտեսական ընկերությունների ստեղծումը,

3.1.8 Անապահով խավի ուսուցման հետ կապված սեմինարներ, հրատարակչական և տեղեկատվական գործունեության իրականացումը,

3.1.9 Աջակցել իրականացնելու հոգևոր, սոցիալական և կրթական աշխատանքներ:

3.2 Հիմնադրամի շահառուներն են համարվում՝

3.2.1 Հասարակության սոցիալապես անապահով ընտանիքների անդամներ,

3.2.2 Երեխաներ,

3.2.3 Հաշմանդամներ,

3.3 Հիմնադրամը անձամբ կարող է իրականացնել հետևյալ տեսակների ձեռնարկատիրական գործունեություն.

3.3.1 Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի շինարարություն, բնակելի և ոչբնակելի շենքերի նորոգում,

3.3.2 Իրավաբանական, բժշկական ծառայությունների մատուցում,

3.3.3 Պարենային, ոչպարենային և շինարարական ապրանքների մեծածախ և մանրածախ առևտուր,

3.3.4 Երեխաների ուսումնական և զարգացման կենտրոնների ստեղծում,

3.3.5 Հրատարակչական այլ գործունեության իրականացում:

3.4 Հիմնադրամը կարող է նաև ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել այնպիսի դեպքերում, երբ դա ծառայում է սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացմանը, որոնց համար այն ստեղծվել է, և համապատասխանում է այդ նպատակներին: Հիմնադրամն իրավունք ունի զբաղվել միայն իր կանոնադրությամբ նախատեսված և/կամ հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ: Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել ինչպես ուղղակիորեն, այնպես էլ այդ նպատակով իր կողմից ստեղծված տնտեսական ընկերությունների կամ դրանց մասնակից լինելու միջոցով:

3.5 Օրենքով սահմանված առանձին ձեռնարկատիրական գործունեության տեսակներով Հիմնադրամը կարող է զբաղվել միայն լիցենզիայի ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ հիմնադրամը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում ձեռնարկատիրական գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Հիմնադրամը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այլ գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

3.6 Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու համար Հիմնադրամը՝

3.6.1 Բարեգործական հիմունքներով ներգրավում է միջոցներ իր կանոնադրական նպատակների իրականացման համար,

3.6.2 Համագործակցում է Հայաստանի Հանրապետության և արտերկրի հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ,

3.6.3 Շահագրգիռ հիմնարկների և կազմակերպությունների միջև կազմակերպում է փորձի փոխանակություններ,

3.6.4 Իրականացնում է հրատարակչական գործունեություն,

3.6.5 Կանոնադրական նպատակների իրականացման համար իրականացնում է այլ գործունեություն:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Հիմնադրամն իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրավունք ունի.

4.1.1 անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին,

4.1.2 պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար,

4.1.3 ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից,

4.1.4 իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

4.2 Հիմնադրամը պարտավոր է.

4.2.1 գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Օրենքին և այլ օրենքներին ու իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան,

4.2.2 օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,

4.2.3 օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ,

4.2.4 իրականացնել Օրենքով և այլ օրենքներով սահմանված պարտականություններ:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

5.1 Հիմնադրամի կառավարման մարմիններն են.

5.1.1 հոգաբարձուների խորհուրդը,

5.1.2 Տնօրենը,

5.2 Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ): Խորհրդի անդամների թիվը կազմում է 5 (հինգ) հոգի: Խորհրդի անդամները առաջին անգամ նշանակվում են Հիմնադրի որոշմամբ:

5.2.1 Խորհրդի առաջին կազմի անդամների լիազորությունները սկսվում են Հիմնադրամի պետական գրանցումից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալու հաջորդ օրվանից:

5.2.2 Հիմնադրամի Խորհրդի անդամներ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք:

5.2.3 Խորհրդի անդամների և Նախագահի լիազորությունների ժամկետը չի սահմանափակվում:

5.2.4 Հիմնադրամի Խորհրդի անդամները չեն կարող լինել Հիմնադրամի այլ մարմնի անդամ:

5.3 Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

5.3.1 առաջարկություններ ներկայացնել Հիմնադրամի Խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,

5.3.2 նախապատրաստելու և Հիմնադրամի Խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր,

5.3.3 ստանալ տեղեկություններ Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ,

5.3.4 ստանալու իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

5.4 Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

5.4.1 Խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա,

5.4.2 նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ Խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով,

5.4.3 դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում,

5.4.4 նրա մահվան դեպքում:

5.5 Խորհրդում թափուր տեղ առաջանալու դեպքում Խորհրդի նոր անդամ նշանակվում է Հիմնադիրի կողմից, իսկ եթե Հիմնադիրը գոյություն չունի, Խորհրդի կողմից: Խորհրդի անդամի թեկնածու կարող են առաջադրվել խորհրդի յուրաքանչյուր անդամի կողմից, Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու օրվանից ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում: Խորհրդի նոր անդամը ընտրված է համարվում Խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:

5.6 Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

5.6.1 Հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը,

5.6.2 Հիմնադրամի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների հաստատումը,

5.6.3 Հիմնադրամի բյուջեի և նրա դրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը,

5.6.4 Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,

5.6.5 Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

5.6.6 Հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը,

5.6.7 Հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի և ժամկետների սահմանումը, միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը,

5.6.8 Հիմնադրամի Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը,

5.6.9 Խորհրդի նախագահի, տնօրենի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը,

5.6.10 Տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը,

5.6.11 Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը,

5.6.12 Տնօրենի տարեկան հաշվետվությունների լսումը,

5.6.13 Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը,

5.6.14 Հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը,

5.6.15 Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների հաստատումը,

5.6.16 Օրենքով, Կանոնադրությամբ, կանոնակարգերով նախատեսված, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

5.7 Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստեր միջոցով: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել հեռախոսով, տեսակոնֆերանսով կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով, ինչպես նաև հեռակա կարգով: Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

5.7.1 Խորհրդի նախագահի ընտրության և ազատման, Հիմնադրամի Տնօրենի ընտրության և ազատման, ինչպես նաև Հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր ձայների մեծամասնությամբ:

5.7.2 Խորհուրդը Հիմնադրամի վերակազմկերպման մասին որոշումներն ընդունում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

5.7.3 Եթե Խորհրդի նիստում քնարկվում է Հիմնադրամի Խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

5.7.4 Խորհրդի Նախագահին ընտրում են Խորհրդի անդամները՝ Օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել Նախագահին կամ ընտրել նոր Նախագահ՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

5.8 Խորհրդի Նախագահը՝

5.8.1 կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

5.8.2 գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,

5.8.3 կազմակերպում է նիստերի արձանագրությունների վարումը,

5.8.4 Խորհրդի քննարկմանն է ներկայացնում Խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ՝ սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

5.8.5 Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, Խորհրդի որոշմամբ, կատարում է անդամներից մեկը:

5.9 Խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ Խորհրդի նախագահի կողմից: Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Խորհրդի անդամների 1/3-րդի պահանջով՝ Խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում:

5.10 Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Տնօրենը: Տնօրենը ընտրվում է Խորհրդի կողմից մեկ տարի ժամկետով: Խորհուրդը կարող է նույն տնօրենին վերընտրել անսահմանափակ քանակությամբ անգամ:

5.10.1 Տնօրենի իրավասությանն են պատկանում Հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, որոնք չեն պատկանում Խորհրդի իրավասությանը:

5.10.2 Տնօրենը կազմակերպում է Խորհրդի որոշումների կատարումը:

5.10.3 Տնօրենին ընտրում և պաշտոնից ազատում է Խորհուրդը: Նրա պաշտոնում առաջին անգամ նշանակում կարող է կատարել Հիմնադիրը:

5.10.4 Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանգրով: Հիմնդրամի անունից պայմանագիրը ստորագրում է Խորհրդի նախագահը կամ Խորհրդի լիազորված այլ անձ:

5.11 Տնօրենը.

5.11.1 տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Հիմնադրամի անունից,

5.11.2 ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

5.11.3 գործում է առանց լիազորագրի,

5.11.4 տալիս է լիազորագրեր,

5.11.5 օրենքով սահմանված կարգով կնքում է պայմանգրեր, այդ թվում՝ աշխատանքային,

5.11.6 բանկերում բացում է Հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,

5.11.7 Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումնորի, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպչական կառուցվածքը, հաստիքացուցակը,

5.11.8 իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

5.11.9 սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Հիմնադրամի աշխատակիցներին,

5.11.10 աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական միջոցներ,

5.12 Տնօրենը այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Խորհրդի համաձայնությամբ:

5.13 Խորհուրդն իրավունք ունի ցանկացած պահի լուծել Տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ Օրենքով, Հիմնադրամի կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

5.14 Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով Հիմնադրամը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական և վիճակագրական հաշվետվություն:
5.15 Հիմնադրամի կառավարման այլ մարմինների իրավասությունները սահմանվում են Խորհրդի կողմից սահմանված կանոնակարգերով:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

6.1 Հիմնադրամը՝ որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է գույքով:
6.2 Հիմնադրամի սկզբնական միջոցներն են Հիմնադիրների կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և (կամ) ֆինանսական միջոցները: Հիմնադիրի կողմից Հիմնադրամին հանձնված գույքը Հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված կարգով: Հիմնադրամն իր կանոնադրությանը համապատասխան սեփականատիրոջ իրավունքով իրականացնում է իր գույքի տնօրինումը, օգտագործումն ու տիրապետումը:
6.3 Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝
6.3.1 Հիմնադիրի ներդրումները,
6.3.2 ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվություններն ու նվիրաբերությունները,
6.3.4 Հիմնադրամի կողմից իրականացված գործունեությունից ստացված եկամուտները,
6.3.5 Հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
6.3.6 օրենքով չարգելված այլ միջոցներ:
6.4 Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր Հիմնադիրի, Հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև Հիմնադրամի աշխատակիցների, բացառությամբ աշխատակիցների աշխատավարձի և Հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Հիմնադրամի հիմնադիրները, Հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև Հիմնադրամի աշխատակիցները հանդիսանում են կանոնադրությամբ նախատեսված շահառուներ:

7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1 Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել Խորհրդի որոշմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:
7.1.1 Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն Հիմնադրամի՝ այլ հիմնադրամի միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով:

7.1.2 Հիմնադրամը միաձուլման ձևով վերակազմակերպվելիս վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված հիմնադրամի պետական գրանցման պահից:

7.1.3 Հիմնադրամը այլ Հիմնադրամի հետ միաձուլման ձևով վերակազմակերպվելիս նրանք համարվում են վերակազմակերպված՝ միացած հիմնադրամի գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից:

7.2 Լուծարումը Հիմնադրամի գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքները և պարտականություժունններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

7.3 Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

7.4 Հիմնադրամը կարող է լուծարվել, եթե՝

7.4.1 Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ,

7.4.2 իր գործունեությամբ Հիմնադրամը շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից,

7.4.3 հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխություններ,

7.4.4 Հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները,

7.4.5 Հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել իր կանոնադրական նպատակների հակասող գործունեություն,

7.4.6 Հիմնադրամը ստեղծելիս Հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ,

7.4.7 Հիմնադրամը կարող է լուծարվել նաև Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

7.5 Դատարանի կողմից Հիմնադրամի լուծարման մասին որոշումն ընդունելուց հետո Հիմնադրամի Խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և Օրենքի համաձայն՝ սահմանում է լուծարման կարգը և ժամկետները:

7.6 Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Հիմնադրամի գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող Հիմնադրամի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

7.7 Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

7.8 Լուծարման հանձնաժողովն իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող http://www.azdarar.am հասցեում հայտարարություն է զետեղում Հիմնադրամի լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից, որը համարվում է Հիմնադրամի լուծարման գործընթացի սկիզբ:

7.9 Լուծարման հանձնաժողովն իրականացնում է գույքի վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին Հիմնադրամի լուծարման մասին:
7.10 Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող Հիմնադրամի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին: Միջանկյալ լուծարման հաշվեկշիռը հաստատում է Հիմնադրամի Խորհուրդը:
7.11 Պարտատերերի կողմից պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ միջանկյալ լուծարման հաշվեկշիռը հաստատելու պահին Հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցվում է պետական բյուջե:
7.12 Հիմնադրամի գույքն ամբողջական բաշխումն իրականացնելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է հաշվեկշիռը և ներկայացնում Հիմնադրամի խորհրդի հաստատմանը:
7.13 Հիմնադրամի լուծարումն համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ պետական գրանցման պահից:

8. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

8.1 Խորհուրդը և/կամ Հիմնադիրը կարող են որոշում ընդունել Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնելու վերաբերյալ: Հիմնադրամի Խորհրդի նախագահը կարող է Խորհրդին և Հիմնադիրին ներկայացնել առաջարկություններ Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ մտցնելու վերաբերյալ:
8.2 Եթե կանոնադրության փոփոխությունները վերաբերում են Հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին, ապա փոփոխություններ կատարելու իրավունքն իրականացնում է դատարանը՝ Հիմնադրամի մարմինների կամ հիմնադիրի դիմումի հիման վրա:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1 Սույն կանոնադրությամբ չնախատեսված հարաբերությունները և խնդիրները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
9.2 Սույն կանոնադրությունը կազմված է հայերեն լեզվով՝ 2 (երկու) օրինակից: